**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Ե/2314-24** **0077, Երևան, Մ.Մաշտոցի պող. 47**

27 Սեպտեմբերի, 2024թ.

**«ՀԵՏՔ» ԼՐԱԳՐՈՂ**
**ԳԱՅԱՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**
էլ. փոստ՝ hovsepian.gay@gmail.com

**Հարգելի՛ տիկին Հովսեփյան,**

Ի պատասխան 2024 թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ պետական վերահսկողական ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն) ներկայացված Ձեր թիվ Մ/2739-24 հարցմանը՝ հայտնում եմ, որ համաձայն «Պետական վերահսկողական ծառայություն մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ծառայության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները զեկուցվում են ՀՀ վարչապետին:

Հարկ եմ համարում նշել, որ համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ իրականացված վերահսկողության արդյունքներով Ծառայությունը վերլուծում է արձանագրված խախտումները, խնդիրները, դրանց պատճառները, հանգամանքներն ու հետևանքները՝ դրանց վերաբերյալ ՀՀ վարչապետին ներկայացնելով տեղեկանքներ ու զեկույցներ, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ դրա վերաբերյալ հանձնարարական տալու առաջարկություններ:

Ելնելով վերոգրյալից հայտնում եմ, որ իրականացված վերահսկողության արդյունքների շահառուն ՀՀ վարչապետն է, հետևաբար՝ վերահսկողության արդյունքները կամ դրան մաս կազմող տեղեկությունները ենթակա չեն փոխանցման երրորդ անձին:

Բացի այդ քրեաիրավական գնահատական տալու նպատակով՝ ուսումնասիրության արդյունքները ուղարկվում են համապատասխան մարմիններ՝ դրանց հետագա ընթացքը լուծելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ 2024 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ Ե/2222-24 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն անհրաժեշտ է համարել ամբողջական:

Տեղեկացնում եմ նաև, որ Ծառայությունը պարբերաբար հրապարակում է բժշկական կազմակերպություններում իրականացված ուսումնասիրությունների և մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն, կից ներկայացվում են այդ հրապարակումների հղումները:

1. https://www.supervision.am/%d5%ba%d5%a5%d5%bf%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%be%d5%a5%d6%80%d5%a1%d5%b0%d5%bd%d5%af%d5%b8%d5%b2%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%ae%d5%a1%d5%bc%d5%a1%d5%b5%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-3/,
2. https://www.1lurer.am/hy/2023/09/12/7/993947
3. https://www.1lurer.am/hy/2024/06/28/7/1149722

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**ԳԱՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

X

Կատարող՝ Լիլիթ Հարությունյան
Ստորաբաժանում՝ Սոցիալական ոլորտի վերահսկողության վարչություն
Հեռ.՝ 010 31-32-17